

(Կարնոյ նահանգին արդի կառավարա-
կան վիճակը . — Կառավարիչը . — Դա-
տական իշխանութիւնը . — Տրոց հաւա-
քում . — Տնտեսական վիճակ . — Ազգային
կացութիւնի կարին . — Վիճակ յարաբե-
րութեանց ընդ տեղական կառավարու-
թեան . — Կառավարական վիճակը . — Կարնոյ
նահանգին մէջ . — Միացեալ ընկերու-
թեանց վարժարաններուն քննադատե-
լի վիճակը .)

Կարնի, 12/24 Դեկտ. 1881

ժամանակէ մը հետէ Պատ. լըրա-
գրող տեղւոյ թղթակիցները Գը-
րեթէ իսպառ դադարած են լուր և
տեղեկութիւններ հրատարակելէ
Հայաստանի ամենէն կարեւոր և գը-
լաւոր գաւառին վրայ :

Կարնոյ վրայ ամենէն քիչ կը
տեսնուին տեղեկութիւններ և լու-
րեր՝ որք պէտք էր ամենէն շատ
լինել :

Եթէ զիս ալ շնորհ ընէք ընդու-
նի իբրև Ձեր թղթակիցներէն մին ,
կը խոստանամ ձեզ անպակաս տե-
ղեկութիւններ տալ այս գաւառին
վրայ :

Կարնոյ կուսակալութիւնը, որուն
մէջ կը գտնուին այսչափ հազարա-
ւոր Հայեր , չորս գաւառէ կը բաղ-
կանայ որք են Պայազլիտ , Բաբերդ ,
Երզնկայ և Կարնի : Սոցա ընդհա-
նուր կառավարին է Մուսթաֆա
բաշա , որ ձեր թղթակիցներէն գո-
վութեան արժանացած է երբեմն
Երբեմն , բայց այս օրերս , լծէ գա-
ւառին մէջ և լծէ քաղաքին մէջ զայ-
րացած գողութեանց համար այսպի-
սի անլսող դերք մ'ստացած կ'ընելի,
որ բաւական կապակածի կ'ընթարկէ
իւր բարի կառավարի մը վայելած
համբաւն : Հարկահաւաքութեան
տասանորդի արժանաց վաճառման
համար վատնած հոգեւորական և մշտա-
դուրեկեան մի լծելու մասն իսկ
չուցին շնորհի հասարակաց անդոր-
րութեան և բարեկարգութեան :
Իւր իշխանութեան սերքն գտնուած
նշանակեալ չորս գաւառներու կա-
ռավարիներն դրեթէ այս օրեր բո-
լորն ալ քաղաքէն անցնէ , և ես
նոցա հետ տեսութիւններ ըրի :

Պայազլիտի հաշակաւոր կառա-
վարին , որոյ պաշտօնակալութեան
համար Բրիտանական զահրիճն այն-
չափ աշխատեք է , այս տեղ կը
գտնուի , և որպէս լծէ քառասուն
նի թղթակիցալ է , իր կողմը շահած
լինելով վարկական ժողովոյն պաշ-
տօնեայ-անդամները , կը փորձէ ար-
դարանալ իւր այնչափ կեղծքմանց
և հարստահարութեանց համար .
նա հանգիստ բազմած կ'ընդունի
մէջ կ'ստանայ իւր ամականն ա-
ռանց աշխատութեան :

Երզնկայի կառավարի ընտրուած
էր և զնաց իւր տեղը Արտահանի
գաղթականներէն Հանի Հիւսէյին
բաշա , եթեանստանայ և իւր շատ
մը կարողութիւններէն զգուշացնէ մի
անձ , այլ սակայն բարութեան մեծ
համբաւ մը կը վայելէ , չգիտեմ լծէ
այս լոկ համբաւը կ'օգտէ՞ փոխա-
կիլ կառավարելու գիտութեան և
ուրիշ շատ մը ձրիք , որովք օտոնալ
պէտք է լինի կառավարի մը , որոյ
խնամոց յանձնուած են հազարաւոր
հայաւորներ :

Կարնոյ կառավարիչը (Մէրքէզ
մեթասէրիֆի) տակաւին չհասաւ
քաղաք , և տակաւին ոչինչ չու-
նիմք գրելու անոր մասին :

Բաբերդի կառավարին է Եու-
սուֆ բաշա , որ կարիք գաղթա-
կաններէն է և իւր կարսի մէջ ու-
նեցած անձնական գործոց կար-
գադրութեան համար հոս եկած է :
Գիտութեան և դպրութեան խիստ
քիչ տեղեկ անձ , այլ կառավարե-
լու հմուտ և փորձառու կ'ընելի ,
իւր իշխանութեան օրով Բաբերդի
Հայ և Թուրք հստակութիւնը
գլխաւորութեան նշան մը ցոյց չէ տը-
ւած . և եթէ ի մօտոյ վերադառ-
նայ իւր պաշտօնին , կը յուսանք լծէ

դարձեալ մի և նոյն եռանդեամբ
Տէրութեան և ժողովրդեան շա-
հերն իրարու հետ համաձայնեցնե-
լու եղանակաւ կը վարէ իւր պաշ-
տօնը :

Արդարութեան գաւառանոց վը-
րայ մինչև հիմա ձեր թղթակիցնե-
րու տուած տեղեկութիւններէն ի
զատ նոր տեղեկութիւն մը չտեսնը-
ւեցաւ լրագրողը մէջ : Այս գաւառ-
րանները խիստ մեծ կարեւորու-
թիւն ունին այն պատճառաւ որ
այդ չորս գաւառի և նոցա երկար-
կեալ քսան գաւառակներու բոլոր
եղեռանց , յանցանաց և օրինազան-
ցութեանց դատերն իբրև վերա-
քննութիւն և իբրև նախադատ
ատեններ բոլորն ալ այս գաւառ-
րաններէն պէտք է որ անցնին , և
մեզ Հայոցս համար արտաքոյ կար-
գի կարեւորութիւն մ'ունենի Դը-
բաղքաբար ահա այս գաւառան-
ները զուրկ են բարձրագոյն հրակո-
ղէ մը , և որովհետեւ օրէնքը դա-
տարաններն ամեն ճշմանէ ազատ
հրատարակած է , կարծես լծէ ա-
զատ ի ճշմանէ կը նշանակէ ազատ
ամեն պատասխանատուութեան , ա-
զատ ամեն խղճի խաթմէ . և ահա
այս ուղղութիւններով կը վարուին
այս քաղաքին մէջ դատերն :

Նախագատ ատենի քաղաքային
և Պատժական բաժիններու համար
այնպիսի տարաձայնութիւններ կը
պտտուին ժողովրդեան մէջ , որոց ա-
մենին եթէ հաւատք ընծայել պէտք
ըլլայ , դարմանօք պիտի տեսնուի
կարնոյ և ամբողջ գաւառին քաղ-
քային վրայ մնացած ըլլալով վերա-
քննութեան կրկին բաժիններ լծէ-
նա հասարակաց լեզուին տակ ին-
կած են , բայց սոցա մեղաններու
վրայ տեսնուած գործերն անմիջա-
կան գործադրութեան ենթարկուել
չըլլալով՝ առաջիններուն չափ ծանր
տալաւորութիւն մը յառաջ է բերած
չեն ժողովրդեան մէջ : Առեւտրա-
կան գաւառանքի հակառակ իւր վե-
րակազմութեան՝ տակաւին չվայե-
լեր այն փոստահոթիւնը զոր հարկ
էր ներշնչել իւր նորոգութեամբ :

Այս գաւառանքին ամեն որո-
շումներն ու և տնօրինութիւնները
գործադրող և կառարող երկրին
ոստիկանութիւնը , միեւնոյն ողբա-
լի վիճակին մէջ է , ինչպէս առաջ .
խիստ սակաւամիւր ոստիկաններ ,
և զեղծ և տգէտ պաշտօնեայք ի-
րենց ափին մէջ ունին հասարակաց
անդորրութիւնն ու բարեկարգու-
թիւնն , որք կը յուսանք լծէ գէթ
այսուհետեւ մեծագոյն հոգածու-
թեան առարկայ պիտի լինին կայ-
սերական կառավարութիւնէն , քա-
նի որ վերջացած են քաղաքական
և երկտական խնդիրք :

Հարկաց հաւաքման մասին գա-
ւառին մէջ ծայրէն միւս ծայրն այն-
պիսի արտասովոր վրայ է լանք , և
հետամտութիւն կը տեսնուի որ նը-
կարագրել անկարելի է : Մայր , Բա-
ղէշի , Պալանդի , Խնուսի , Դերվա-
նի , Ալաշկերտի և Սպարի մէջ հա-
րուաւոր Հայեր ու Թուրքեր բան-
տեքը լցուած են այնպիսի ծանր
ծանր Պէքայէներու համար , որք
ոչ յաստիւ և ոչ ի հանդերձեւում
պիտի կարողանան վճարել իսկ երկ-
րին ներքին վիճակը , անտեսակա-
ն վիճակը , ոչ նուազ տխուր է , լծէ
և հուճեքն ամենուրեք գոհացու-
ցիչ էին և երկարգործ դասը , մա-
նաւանդ այն գաւառներուն մէջ ,
յորս սոքը անխնայ կը տասանորդէր
զիրենք , ազատուած են առանց
հացի սովամահ լինելէ , բայց չեն
ազատուած տնտեսական սովամահ
հուճեքէն : Այո , ալ մը կորեկ ,
ցորեն կամ գարի ունի հիմա Ա-
լաշկերտցին , Բաբերդցին և ուրիշ
ամեն գաւառացիք , բայց այդ ափ
մը ցորենը չկրնար վճարել իւր տե-
րութեան տուրքը և զանազան հար-
կերը , չկրնար ծածկել իւր գաւա-
կաց մեկութիւնը , չկրնար գոհ-
ցուներ անհամար երթեւեկաց պի-
տոյքները , ուստի և գիւղացւոյն
համար սոքը ու նեղութիւնն ան-
վերջանալի են :

Քաղաքացի կամ արհեստաւոր
դասն յետին չբաւորութեան հա-
սած է . վերջին պատերազմին առ-
թիւ երկրին կրած զանազան նեղու-
թեանց և յոյստմանց պատճառաւ ,
և սոցա անմիջական հետեւութեանց
այն է սովուշեցնել լծակութեան երե-
ւել կորսնցուցած է իւր փոքրիկ
դարմազուլին Աշխատութիւնը որ
ի մանկութենէ հետէ արհեստաւո-
րին դարմազուլին էր , այլ ևս ոչինչ
չարժեք , իւր գործունեութեան
սահմանը խիստ անկացած է , կ'աշ-
խատի չ'աշխարհ , կը գործէ՝ իւր գոր-
ծըն ստակ լընք , վերջապէս ինչ որ
կրնէ և ինչ որ ալ ընելու ըլլայ՝
ձեռնուռնայ կը մնայ :

Հարուստ և դրամատէր ըսուած
ներն , որք երկրագործին վրայ ցոր-
եան , արհեստաւորին վրայ դրամ
ունենին և վարելահողեր , երկրա-
գործին ցորեանէն արտածութիւն
չըլլալուն պատճառաւ օգուտ մը
չեն կրնար քաղել , արհեստաւորին
վրայ ունեցած պատկին չեն կրնար
առնել և հողերը կէս անմիջ կը
մնան , անմիջութեան ամենու-
րեք կը թագաւորէ ինչպէս պիտի
կրնային և պիտի կրնան պահել ի-
րենց փոքրիկ դրամաշուքին՝ որ հա-
րստութիւն կ'անուանի այս աղ-
քատ երկրներուն մէջ :

Ահա այս նկարագիրն է՝ որ կը
ներկայանայ հետաքննի անձի մը
աչքերուն , երբոր այս գաւառներու
ներքին և արտաքին վիճակն ուշի
ուշով կը զննէ և կ'իմաստասիրէ ,
խոստանալով ձեզ հետզհետէ ման-
րամասն գրել այս ընդարձակ նիւ-
թերուն վրայ , կ'անցնիմ հոմառօ-
տակի տեսութիւն մ'իւս ընել կար-
նոյ Աղգային գործոց վրայ :

Կարնոյ Գեր . Առաջնորդն իւր
թեւոց ներքեւ ունենալով վարչու-
թիւն մը , որոյ Առաջնորդն է Վսեմ
կարագրեալ Գր. Պալար , կը գործեն
ու կը տնտեսեն Աղգին վարչական
գործերն որչափ որ գիտեն և կրնան
այն գոհութիւնը զոր ես և ինձի
պէս ամեն կարնեցիք կ'զգան ներ-
կայ վարչութեան կատարող պի-
տի լինելը ալ՝ ատեն , եթէ այս
վարչութիւնն ալ իւր մէկ երկու
նախորդաց նման առաջնորդ իրենք
քանի մը լծելու ամբողջութեամբ ընդ-
դրուութիւններն ու հակառակու-
թիւններն , որչափ կարելի է զգու-
շանար անուշ տեղը կապելու քա-
ղաքականութեան որ քանդած է
և կը քանդէ մեր Աղգին տունը ,
Մեզի պէս տկար , տգէտ և ժամա-
նակին պահանջմանց իսպառ ան-
ծանօթ աղգի մը համար իշխանու-
թիւնը պէտք է այնչափ պատկա-
ռելի և այնչափ բարձր լինի , որուն
չը կարողանան հասնիլ ոչ սրճարանի
լեզուներն և ոչ ստորին քննադա-
տութիւնը :

Այս վարչութիւնն իրեն աջակից
ունի փոքր ի շատե պաշտօնին հը-
մուտ անձերէ բաղկացեալ Ուսում
նական խորհուրդ մը , որք եթէ
որչափ կը փափաքին , այնչափ աշ-
խատին , և որչափ կը խօսին՝ այնչափ
գործեն , և եթէ հետեւին միմիայն
իրենց մեղուաշան նախադասին ,
կարնոյ կրթութեան դործը հսկա-
յաքալ պիտի յառաջադրէ , որ
այսու հանդերձ մեծ փոփոխու-
թիւններ կրած է ի յառաջագիտու-
թիւն շնորհիւ Սրբազան Առաջնոր-
դին :

Վարչութեան Օժանդակ խոր-
հուրդներէն մին է նաեւ Թաղական
խորհուրդն , որ իւր անհոտ , ան-
համ և անգոյն բաղադրութեամբն
առականոր ճշգրտան պէս քանի մը
ամիս քաղաքի յետոյ , վերջապէս
հրաժարեցաւ , և ինքն ալ ազատե-
ցաւ հասարակաց տրտուշներէն և
գլխաւորութեան Տնտեսական և
գաւառականական խորհուրդներն ,
ինչպէս քննեցին և տեղեկացայ կը
պարունակեն իրենց մէջ այնպիսի
անդամներ , որք ետահետամը կը
փափաքին Աղգին օգտին ճշմարիտ
պաշտօն մատուցանել :

Ի վերայ այս ամենայնի , կարնոյ
Աղգային գործերն՝ եթէ ոչ նախա-
նկիւր գէթ լաւ և գոհացուցիչ վի-
ճակ մ'ունեն :

Կառավարութեան և Աղգին
յարաբերութիւնը կ'առարկայ ներ-
գաշնակութեան մէջ են , կ'ուսակ-
ցութիւն կամ խմբակ գրեթէ ան-
յայտնալու վրայ են , և եթէ եր-
բեմն երբեմն լրագրող ամսաց է-
ջերը կը միտտուին Բափաի նման
մամոյ դերմոն եղող գրիչներէ , ա-
ղաք ողլամիտ կարնեցւոյն վրայ
բնաւ աղգեցութիւն չունին , զի
կարնեցին գիտէ հաւաստեալ լծէ
անցած են ալ ևս այն դարերն ,
յորս զրպարտութիւնք և նախա-
տալից տարածայնութիւնք այս ու-
այն պաշտօնէին համարումը կը վը-
րանգէին և վարկը կը մահացը-
նէին , Հասկցած է կարնեցին լծէ
քանի մը սինըքոր և ընկերութեան
մէջ ամենէն ստորին դերակատար-
ներն , զայս ու զայն զրպարտելով
գրեթէ ու կարեւորութիւն ստանալ
չեն կարող , Հասկցած է վերջապէս
կարնեցին լծէ իրեն շատ օգտակա-
րապէս կը ծառայէ Գեր . Օրմանան ,
և անոր համար իւր համակրու-
թեամբ , սիրով , յարգանքն և
իւր ամենէն յարգելի անդամներու
վը շրջապատած է զնորին դերա-
պատուութիւն , և չպիտի դադա-
րի վարկեան մ'եւս լընել զնա
մինչև որ ուսմամբ , կրթութեամբ
և դարգայմամբ հասնի այն Աւետ-
եաց երկրն ուր կ'աթն ըլլի և մե-
ղը :

Քաղաքին մէջ երկու ամսէ ի
վեր է որ բացուած է մեծախոր-
հուրդ Սանատարեանցի գիշերօթիկ
դպրոցն , ուր առ ալժամ կը սնանին
և կը դաստիարակուին տաննահինգի
չափ սանուրք մեծաշուք բարբա-
րին՝ Մուշէն , Վանէն և Կարնէն
ընտրուած : Հինգ սանուրք ևս յա-
ռաջիկայ դարնան պիտի բերուին
խորհրդէն և շրջականներն : Իմ
ուսանձնին քննութեան յետոյ կը
խոստանամ ձեզ և աղին ընթեր-
ցողացը հաղորդել տեղեկութիւն
ներ այս դպրոցի Ուսումն . Ժրագ-
րին և ներքին կարգադրութեանց
վրայ , որ այժմ կը գտնուին ի ձե-
ւըն Պ. Յ. Ստատիկեանցի՝ ընդ բար-
ձր հոկոյնութեամբ Հայր Օրման-
եանի , Սոցա գաւառականներէ մի-
ոյն Պ. Պ. Դերմեանի տարածած
ողբալի մահը ստիպած է դրարեա-
րն փութանցն Պ. Սողիկեան և Պ.
Արեւիկեան երկտասարդներու գա-
լուստն , որք քանի մ'օրէն այս տեղ
կ'սպասուին :

Ստեպ ստեպ կը հարցնեմ և կը
տեղեկանամ շրջակայ գաւառի աղ-
գայնոց կրթական վիճակին վրայ ,
լինելով՝ որ ներկայիս ամեն Հայու
ուշադրութեան առարկայ պէտք է
լինի Միացեալ ընկերութեանց դըպ-
րոցներուն համար , եթէ հարկ է որ
չծածկենք ճշմարտութիւնը , պէտք
է ըսել լծէ Տուրուբերանի տեսչու-
թեան ներքեւ գտնուած վարժարա-
նաց մէջ , ի բաց առեալ Մայր Ընկե-
րական , չկայ մի վարժարան յորմէ
բան մ'ապասել կարելի ըլլայ : Բա-
ղէշի ընկերական չգիտեմ ինչօր
զրկուած է ընկերութեան բարձր
նպատակներ ծառայելու համբաւէն :
Կարնոյ վարժարանը ցրուած է իս-
պառ (*) : Ալաշկերտի վարժարանն
իւր փակուել կամ որ նոյն է ընդ-
փակման իւր անկարգ վիճակը պար-
տական է վարժապետի մը , որ ամուս-
նութեան առթիւ իւր պարտոց
կատարման անփոյթ , մէկ անկէն
քաղաք և իսպառ բարձի լծողի
ըրած է , ինչպէս կըսեն , զվարժա-
րան և զուսանողս : Քոյի խուսյո
գիւղի և գիւղաքաղաքի դպրոցնե-
րը փակելու համար , տարիէն ա-
ւելի այդ դպրոցներու տեսուչ Պ.
Թորոսեան չմնաց զեղծում որ չգոր-
ծադրէր . իւր վարուց և վարմանց
համար տեղւոյն առաջնորդին և Աղգ-
ժողովոց ըրած արդար գիտողու-
թիւններն ընկերութեան վարչութե-
նէն չգնահատուեցան երբեք , այն-

(*) . — Զարմանալի է որ Միացեալ
ընկերութեան կողմէ ոչ մի պաշտօնա-
կան մարմին չպատասխանեց տակաւին
խորհուրդներուն հրապարակային հը-
րաւերին , որով բացատրութիւն կը
խնդրուէր Կոյալ վարժարանին փակ-
ման վրայը :

չափ որ ընկերութիւնը կը կարծէ լծէ
սպառնալօք կարելի է կատարել
այս Բրդեւոյ իրենց այն պատա-
ւորութիւնները զորս տարի մ'ա-
ռաջ խիստ յօժարափոյթ էին կա-
տարելու : Եթէ Միացեալ ընկերու-
թեանց վասպուրականի և Կիրիկի-
ոյ վարժարաններն ալ մեր գիտցած
և ամեն որ հարցաքննած վարժա-
րանաց վիճակն ունենան , ստուգել-
ծանր է ընկերութեան պատասխա-
նատուութիւնն : Կը յուսանք լծէ
այս քանի մը տաղերն ընկերութեան
խորին ուշադրութեան կը հանդի-
սի ի մի կոյս թողլով այն անձնակա-
նութիւններն , որոց մեր աղքը որ-
չափ հետեւեալ՝ այնչափ տուժեց ,
թողլով այն վեցուն և սնտոյ վեճերն ,
որոց երեսն այս ամօթալի վիճա-
կին հասանք այսօր , կը բարեհաճի
զգալ լծէ ինչ ծանր , քանի՞ լուրջ և
սրճափ նուիրական պարտաւորու-
թիւն մ'ստանանք , և և կը վա-
ռասիրուի միմիայն իւր այդ վսեմ
պարտաւորութեան արժանաւորա-
պէս կատարմամբ :

Միութարուած և շատ միութար-
ուած պիտի լինիմ ես , եթէ մի քա-
նի ժամանակ յետոյ կարողանամ
աւետել ձեզ այդ իմ նշանակած
ընկերական վարժարանաց բարե-
կարգութեան և յառաջադիմու-
թեան լուրերը , իսկ բաց ի Միաց-
եալ ընկերութեանց վարժարաննե-
րէն , լծէն այս և ամեն գաւառաց
մերաղէնց օրտին մէջ արթնցած է
կրթութեան սերն , բայց փափաք-
ներն յիշականութիւն դառնալու
համար դեռ շատ ժամանակ պէտք
է Արեւելից մէջ ամեն ինչ դա-
նալ կ'ընթանայ ըսած է Եւրոպա-
ցի մը , և շատ իրաւունք ունի .
Հայաստանի կրթական վիճակին
համար ինչ որ դրած էին տարի
մ'առաջ Ձեզ Ձեր խորաշին թըղ-
թակիցներն , նոյնն և կարելի է
գրել այս օրուան համար , Հըր-
ւանէ ասդին բացուած և աւելցած
չէ ամենեւին դպրոց մը ի Դեր-
վան , ի Բաբերդ , ի Սպար , ի Բա-
սէն , ի Խնուս և գաւառիս ուրիշ
ամեն խորշերը :

Ձգիտեմ լծէ մինչև երբ սահ-
մանուած է մեզ այսպէս լոկ անմը-
լի թար լուրերով լեցնել Ձեր պատ-
ուական լրագրոյ էջերը , բայց կը
յուսամ լծէ յաջորդեալ պիտի կա-
րողանամ քիչ մ'ալ քոյաբերական
տեղեկութիւններ հաղորդել Ձեզ :

Լ Ո Ւ Ե Ր

Կ Ա Ի Կ Ա Ս Ի Ա Յ Է Ն

ԵՒ ՌՈՒՍԱՀԱՅԱՍՏԱՆԷՆ

(ՏՖՂԻՍԻ ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒՄԷՆ ՔԱՂՈՒՍԵ)

Ղարաբաղի մեզ գրում են . — Այս-
տեղ կրկին ընկել է Կոյալի քաղաքա-
նաւորութիւնը , զվարտուպէս երկուս-
յից մէջ , որ և իւր զոհերը անխնայ
տանում է : Եղան այնպիսի օրեր՝ որ
մէկ օրուան մէջ երեքը զոհուեցան Այս
հիւանդութիւնը տիրում է Ղարաբաղի
չըլակայ գիւղերում , մանեւում) և կը-
ցնեն են գործ դնում այդ հիւանդու-
թեան դէմ . — Այժմ նոր մարթին փա-
թաթում են պարանոցը և ժամանակ
առ ժամանակ կաթ լսնեցնում :

Նոյն տեղից մեզ գրում են . — Ղա-
րաբաղի մերձակայ Հալաւար Թրքաց
գիւղում օրերումս մի կնոջ և երկու ե-
րեխայի սպանումն է եղել միտին : Հը-
րացանը բացուելով գտնուել կողմնակի
անցնում է երեխայի գլխին (կնոջ ե-
րեխան իւր ձեռքին է ունենում) և կը-
նոջ լեարդի մէջ

